Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի մայիսի 14-ի N 178-L որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի հունիսի 01–ից

«Վճարիր Visa Rocket քարտով և ստացիր idcoin» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 01.06.2025թ-ից 30.06.2026թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված Idram Visa Rocket տեսակի քարտեր, որոնք արշավի ընթացքում Քարտով կկատարեն գնումներ:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում թողարկված Քարտի քարտատեր:
1.4 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում՝ 01.06.2025թ-ից 30.06.2026թ-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Idram Visa Rocket տեսակի Քարտերի Քարտապանները՝ կատարելով վճարումներ, կստանան idcoin գնումներից հետևյալ պայմաններով.

- 0,5% idcoin (նախքան հարկումը) տեղական վճարումների համար, ընդ որում տեղական են համարվում բոլոր այն վճարումները, որոնք սպասարկվում են հայկական բանկերի կողմից տեղադրված POS/vPOS-երի միջոցով,
- 1% idcoin (նախքան հարկումը) միջազգային վճարումների համար, ընդ որում միջազգային են համարվում բոլոր այն վճարումները, որոնք չեն սպասարկվում հայկական բանկերի կողմից տեղադրված POS/vPOS-երի միջոցով,
- 1.5% idcoin (նախքան հարկումը) դեղատներում, բենզալցակայաններում/գազալցակայաններում կատարված վճարումների դիմաց, ընդ որում նշված գնումների համար տրամադրվում է 1.5% idcoin այն դեպքում, եթե տվյալ առևտրի/սպասարկման կետերն ունեն համապատասխան վճարային համակարգի բնորոշիչ (MCC),
- idcoin-ը վճարվում է, եթե գնման արժեքը 5,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավել է, ինչպես նաև օրացուցային ամսվա ընթացքում 5,000 ՀՀ դրամը գերազանցող վճարումների հանրագումարը կազմում է 20,000 ՀՀ դրամը և ավել,
- Օրացուցային ամսվա ընթացքում մեկ Քարտի գծով առավելագույն idcoin-ի սահմանաչափը 5,000 ՀՀ դրամն է (հարկումից հետո):

2.2 idcoin չի վճարվում հետևյալ ոլորտների առևտրի և սպասարկման կետերում կատարված գնումների համար՝ հեռահաղորդակցման ծառայություններ, կոմունալ ծառայություններ,

էլեկտրոնային փողեր, խաղադրույքներ, պետական մարմինների վճարումներ (հարկեր, տուրքեր և այլ վճարներ), բարեգործական հանգանակություններ, Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող այլ ծառայություններ:

2.3 Օրացուցային ամսվա ընթացքում կատարված գործարքների համար idcoin-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 7-րդ աշխատանքային օրը:

2.4 Փաստացի ստացման ենթակա idcoin-ը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 20% եկամտահարկի գանձումից հետո: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի կողմից:

2.5 IDcoin-ի տրամադրման համար օգտագործվում է Բանկում գրանցված հեռախոսահամարը: Ընդ որում, եթե Բանկում առկա չէ գրանցված հեռախոսահամար կամ թերի է՝ IDcoin չի վճարվում: IDcoin-ի տրամադրման և օգտագործման կանոնները ներկայացված են հետևյալ հղմամբ:

2.6 Քարտապանների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.7 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: